Կարգապահական գործ թիվ ԿԳ-14108

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի մարտի 11-ի թիվ 49-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/37-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԵՎԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**),

Նախագահությամբ՝ Խորհրդի անդամ Կարեն Սարդարյանի,

մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյանի, Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Կարապետ Աղաջանյանի, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի և Տիգրան Խուրշուդյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

11.03.2015թ.-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Ռևիկ Գաբրիելյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 430) (այսուհետ նաև՝ **Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>

Քաղաքացի Հասմիկ Գալստյանը (այսուհետ նաև՝ Դիմող) 29.07.2014թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված դիմումով խնդրել է պատասխանատվության ենթարկել փաստաբան Ռ. Գաբրիելյանին՝ իր մասնագիտական կարողությունների սահմաններում բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու, հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը ապահովելու անհնարինության պայմաններում հանձնարարությունն ընդունելու և վճարովի հիմունքներով ծառայություններ մատուցելու պայմաններում իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիր չկնքելու համար:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>

2014 թվականի օգոստասի 27-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Ռևիկ Գաբրիելյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 308-Ա/ԿԳ-14108 որոշումը, համաձայն որի որոշվել է.

«**1. Փաստաբան Ռևիկ Գաբրիելյանի (արտոնագիր թիվ 430) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.3 և 31.8 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-14108):**

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Հասմիկ Գալստյանին:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

- կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

- սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին և փաստաբան Ռևիկ Գաբրիելյանին՝ պարզաբանելով նրանց "Փաստաբանության մասին" ՀՀ օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները»:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները

Դիմող՝ Հասմիկ Գալստյանն իր կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված 29.07.2014թ. և 04.08.2014թ. դիմումներով հայտնել է.

«Երեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանում քննվող 0539(02)13 գործով, ինչպես նաև ինձ հասանելիք ժառանգությունս ստանալու հարցում օգնելու համար 2013թ-ի դեկտեմբերին փաստաբան Ռևիկ Գաբրիելյանն ինձանից 200.000 ՀՀ դրամ էր պահանջել, որն էլ առձեռն տվել եմ նրան՝ առանց միմյանց միջև պայմանագիր կնքելու:

Սակայն անցած ութ ամիսների ընթացքում Ռ. Գաբրիելյանը վարչական դատարանից գործին առնչվող մի քանի փաստաթղթեր վերցնելուց բացի ոչ մի գործողություն չի կատարել, իսկ իմ բողոքները՝ որևէ գործողություն սկսելու համար, թողել է անպատասխան:

Ավելին, նա խոչընդոտել է վարույթում գտնվող գործին՝ ի վնաս ինձ՝ չի ուսումնասիրել նրան տրված փաստաթղթերը, չի կազմել հակընդդեմ հայց, իսկ վերջին դատական նիստի մասին ինձանից իմանալուց հետո, հայտարերել է, որ նրան այդ օրը հարմար չէ, քանի որ մասնակցելու է այլ դատական նիստի, ու չի դիմել դատարանին՝ օրն ու ժամը փոխելու խնդրանքով: Իմ բողոքները՝ գործողություն կատարելու կամ գումարը վերադարձնելու վերաբերյալ, թողել է անպատասխան»:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը 17.09.2014թ. բացատրություն է տվել այն մասին, որ.

«Իր հոր մահից հետո դիմել է փաստաբան Ռևիկ Գաբրիելյանին՝ ժառանգության հարցերում իրավաբանական օգնություն ստանալու համար: Ռևիկ Գաբրիելյանի աջակցությունն է խնդրել նաև Երեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանում քննվող 0539(02)13 գործում, որտեղ Գալստյանը ներկայանում է որպես իր հոր ժառանգ: Այս երկու գործերով իրավաբանական աջակցություն տրամադրելու համար Հ. Գալստյանը փաստաբան Գաբրիելյանին առձեռն վճարել է 200.000 ՀՀ դրամ, նրանց միջև պայմանագիր չի կնքվել:

Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանում քննվող գործով նիստերին Ռևիկ Գաբրիելյանը ոչ մի գործողություն չի նախաձեռնել ի օգուտ

իր վստահորդի, իսկ վերջին նիստին առհասարակ չի ներկայացել՝ չզգուշացնելով դատարանին չներկայանալու պատճառների մասին:

Ժառանգության գործով Հ. Գալստյանի նախաձեռնությամբ գնացել են Դատական դեպարտամենտի արխիվ և որոշ փաստաթղթեր վերցրել, ոչ մի այլ բան այս գործով Ռ. Գաբրիելյանի կողմից չի իրականացվել»:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստերին Դիմողը ներկայացել է և պնդել է դիմումներում արտահայտած իր դիրքորոշումը:

Պատասխանող Ռևիկ Գաբրիելյանը 31.10.2014թ. բացատրություն է տվել այն մասին, որ Դիմողը հանդիսանում է իր մոտ ծանոթի բարեկամուհի, դիմել է նրան ժառանգական իրավունքին առնչվող խորհրդատվություն ստանալու համար:

Պատասխանողի կողմից տրված խորհուրդների արդյունքում Դիմողը ստացել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր: Նշել է, որ խորհրդատվությունն ու օգնությունը իրականացվել են անհատույց, ուստի պայմանագիր չի կնքվել:

Թիվ ԵԷԴ/0539/02/13 քաղաքացիական գործի կապակցությամբ Պատասխանողը հայտնել է, որ տվյալ գործով դատական ներկայացուցչության համար պայմանագիր նույնպես չի կնքվել, քանի որ վճարումներ կատարելու վերաբերյալ պայմանավորվածություն չի եղել:

Նշել է, որ գումարը առձեռն ստանալու մասին Դիմողի պնդումն անհիմն է և իրականությանը չի համապատասխանում:

Հայնել է, որ թիվ ԵԷԴ/0539/02/13 քաղաքացիական գործով նշանակված նիստերին մասնակցել է բարեխիղճ, չի կարողացել ներկա գտնվել միայն 29.07.2014թ.-ին նշանակված դատական նիստին՝ այլ գործերով նիստեր ունենալու պատճառով, ինչի մասին նախապես զգուշացրել է Դիմողին, ով սակայն արգելել է նիստը հետաձգելու միջնորդություն ներկայանել և հրաժարվել է որպես փաստաբան իր ծառայություններից:

Բացատրությանը կից Պատասխանողը ներկայացրել է դատական ծանուցագրեր և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճեն:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին **Պատասխանողը** ներկայացել է և պնդել է բացատրությունում արտահայտած իր դիրքորոշումը՝ ներկայացնելով նաև Երևանի քաղաքապետի թիվ 317-Ա որոշման պատճեն և Երևանի քաղաքապետի խորհրդականի կողմից Վահան Ղազարյանին ուղղված գրության պատճեն:

Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին՝ հայտնել է, որ փաստաբանական ծառայությունների դիմաց վճար չի սահմանվել այն պատճառով, որ թիվ ԵԷԴ/0539/02/13 քաղաքացիական գործը առնչություն է ունեցել Երևանի քաղաքապետարանի գործառույթների հետ, միչդեռ նա «գրեթե միշտ պարտվում է քաղաքապետարանի դեմ գործերով», այդ իսկ պատճառով համոզված չի եղել, որ սույն գործով կարող է հաջողության հասնել, ուստի Դիմողի հետ պայմանավորվածություն են ձեռք բերել, որ Պատասխանողը կվերցնի Դիմողի հանձնարարությունը, կուսումնասիրի գործը, կմասնակցի առաջիկա մի քանի դատական նիստերին, իսկ գործի բարդության մասին պատկերացում կազմելուց հետո նոր կքննարկեն այդ գործով Պատասխանողի՝ որպես Դիմողի ներկայացուցիչ

լինելու նպատակահարմարությունը, և ըստ դրա՝ վարձատվության գումարի հարցը (այսուհետ նաև՝ Պատասխանողի բանավոր բացատրություն):

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը.

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Մարիամ Ղուլյանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2014 թվականի հոկտեմբերի 31-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, գտնում եմ, որ Պատասխանողի կողմից թույլ է տրվել Կանոնագրքի 3.1.3 կետի խախտում»:

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը և սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին **Պատասխանողի կողմից տրված բացատրությունները**, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Պատասխանողը՝ Դիմողի հանձնարարությամբ, վերջինիս մատուցել է փաստաբանական ծառայություններ ժառանգություն ընդունելու և թիվ ԵԷԴ/0539/02/13 քաղաքացիական գործով դատական ներկայացուցչությունն ապահովելու հարցում, սակայն Դիմողի և Պատասխանողի **միջև իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիր չի կնքվել, ինչը հաստատվում է Դիմողի դիմումներով և Պատասխանողի գրավոր և բանավոր բացատրություններով:**

2. 29.07.2014թ.-ին ժամը 12:00-ին Պատասխանողը հրավիրված է եղել թիվ ԵԷԴ/0539/02/13 քաղաքացիական գործով, **թիվ ԵԿԴ/0062/01/14 քրեական գործով և թիվ ԵԿԴ/1690/02/14** քաղաքացիական գործով **հրավիրված դատական նիստերին, ինչը հաստատվում է Դիմողի դիմումներով, Պատասխանողի բացատրություններով և** համապատասխան դատական ծանուցագրերով:

3. Պատասխանողը պատշաճ կերպով չի տիրապետում տեղական ինքնակառավարման մարմիններին առնչվող օրենսդրությանը, ինչը հաստատվում է Պատասխանողի բանավոր բացատրությունով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանող Ռևիկ Գաբրիելյանը փաստաբանի արտոնագիր է ստացել 27.0.1999թ.-ին: 2006-2015թթ. վերջինիս նկատմամբ հարուցվել է 7

կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու հիմքով, որոնցից վեցը կարճվել են՝ արտոնություն կիրառելու հիմքով, իսկ մեկով Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության տեսքով, և տույժը մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով Պատասխանողի բացատրությունը, Խորհուրդը գտնում է, որ 27.08.2014թ. հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբան Ռևիկ Գաբրիելյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ կանոնագրքի **2.7.2 կետի** պահանջների խախտման համար, իսկ մնացած հիմքերով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **2.7.2** կետի համաձայն. «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին **Պատասխանողը՝ տրված բացատրություններով, հայտնել է**, որ փաստաբանական ծառայությունների դիմաց վճար չի սահմանվել այն պատճառով, որ նմանատիպ գործերով նա գրեթե միշտ հաջողության չի հասնում, և տվյալ դեպքում նույնպես համոզված չի եղել իր ուժերում: Մինչդեռ, Պատասխանողը ընդունել է Դիմողի հանձնարարությունը և մասնակցել է դատական գործով նիստերին, այն դեպքում, երբ ի սկզբանե գիտակցել է, որ իրավունքի համապատասխան ճյուղին առնչվող գործով իր մասնագիտական կարողությունների սահմաններում չի կարող պատշաճ իրավական օգնություն ցույց տալ:

Հետևաբար, Պատասխանողի կողմից թույլ է տրվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **2.7.2** կետի պահանջի խախտում:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում փաստաբան Ռևիկ Գաբրիելյանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես այն, որ վերջինիս կողմից նախկինում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտում թույլ է տրվել մեկ անգամ, որի համար սահմանված տույժն արդեն մարվել է:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 կետի համաձայն՝ գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.8 կետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե

զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականաման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 և 3.1.8 կետերի խախտում թույլ տալու փաստերը վկայակոչել և նեկայացրել է Դիմողը, ուստի նա կրում է նշված փաստերի ապացուցման պարտականությունը:

Միչդեռ, Դիմողի կողմից վերը նշված փաստերը հավաստող որևէ ապացույց չի ներկայացվել: Ավելին, Պատասխանողի կողմից ներկայացված ապացույցներից ակնհայտ է դառնում, որ Դիմողի կողմից վկայակոչած դատական նիստին, այն է՝ 29.07.2014թ.-ին, Պատասխանողը չի կարողացել ներկայանալ իրենից անկախ պատճառներով, ինչը չի կարող դիտարկվել որպես Կանոնագրքի 3.1.8 կետի խախտում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 39-րդ, 39.6-ից 39.9-րդ հոդվածների, Պալատի կանոնադրության 16.26 կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռևիկ Գաբրիելյանին (արտոնագիր՝ 430) մեղավոր ճանաչել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Ռևիկ Գաբրիելյանի նկատմամբ նշանակել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Փաստաբան Ռևիկ Գաբրիելյանի (արտոնագիր՝ 430) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 և 3.1.8 կետերի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկվել փաստաբան Ռևիկ Գաբրիելյանին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան